

սերը։ Այլ թող գոյ նախ մի բաժանմունք և մի ամբողջ ժամ միայն դա առանձնակի զբաղուի, այնուհետև դան և միւսները, որով բաժանմունքները կը միանան. առաջին եկողները՝ իրանց սահմանած դասերը առնելուց յետոյ՝ թող միւսներից մի ժամ առաջ ևս վերջացնեն իրանց օրական պարապմունքը, որով վերջին եկողները դեռ ևս մի ամբողջ ժամ կունենան պարապելու, բայց առանձնակի։—Այս ձևը, ինչպէս ասացինք, կոպարներից դուրս լինելով և մանաւանդ ուսուցչի աւելորդ դասի համար վարձատրութեան նոր խնդիր առաջացնելով, գործադրութիւն ստանալ չի կարող, մինչև որ առանձին հրաման չը խնդրուի բարձր հոգևոր վարչութիւնից։

Վերջացնենք մի նկատողութեամբ, որ աւելի հոգաբարձութեանց կը վերաբերի։ Միացեալ բաժանմունքների համար երեք ձև կայ սահմանած, իւրաքանչիւրից երկու կոպար. նոցա մէջ ամենից դժուար գործադրելին է ա. ձևը, ոչ այնքան դժուար է՝ բ. ձևը, իսկ ամէնից հեշտն է գ. ձևը։ Արդ եթէ հոգաբարձութիւնը չի գտնում հոգաբարձութեանց, բայց ցանկանում է բաժանմունքները միացած ունենալ, թող ընտրէ գ. ձևը, որպէս աւելի վստահանալին։

Ս. ՄԱՆԴԻՆԵԱՆ.

ԱԶԳԱՅԻՆ

ՏԵՂԵԿԱԳԻՐ

ՀՈԳԵՒՈՐ ՃԵՄԱՐԱՆԻ ՄԱՅՐ ԱԹՈՒՈՅ Ս. ԵԶՄԻԱՇԵՒ

1889—90 ա.թ.

Անցեալ սեպտեմբեր ամսոյ 20ին հանդիսաւոր կերպով տնօնուեցաւ Մայր Աթոռոյս Ճեմարանի վեշտասաներորդ տարեգարձը։ Ս. Պատարագից յետի ներկայութեան միաբանութեան Մայր Աթոռոյս, բոլոր ուսուցչաց և աշակերտաց ճեմարանիս և խուռն բազմութեան ուխտաւոր ժողովրդոց կատարուեցաւ հոգեհանգիստ ճեմարանի հիմնադիր հանգուցեալ Տ. Գեորգ Վաթուղիկոսի գերեզմանի վերայ։ Այդ օրը եղանակը շատ լաւ էր ու ախորժելի. ուստի և ճեմարանում հանդէսը կատարուեցաւ բաց երկնքի

տակ՝ հիւսիսային դրան առաջ, ուր շարուած էին աթոռներ և նստարաններ ու գրած էր ամբիոն, Ժամը 10ին դրեթէ բոլոր միաբանք Մայր Աթոռոյս և խուռն բազմութիւն ժողովրդեան տեղաւորուած էին թէ աթոռների և թէ նստարանների վերայ, մեծ մասն էլ ժողովրդոց յոտնկայս ներկայ էր, Հանդէսը սկսուեցաւ շարականով, Ապա բմը բարձրացաւ Ճեմարանի տեսուչ Արթ. Հայր Նահապետ արեղայն և կարդաց հետեւեալ տարեկան հաշիւը.

ՍՐԲԱԳՈՒՄԱՐ ՀԱՐԻ

ԵՒ ՄԵԾԱՐԳՈՅ ՀԱՆԴԻՍԱԿԱՆՔ.

Մի բարեյաջող և ուրախալի զուգադիպութիւն է, որ Հայոց եկեղեցական և ազգային ամենափառաւոր Հանդէսներից մինը՝ Ս. Մեռոնի օրհնութիւնը և Մայր Աթոռոյս Հոգեւոր ձեմարանի վեշտասաններող տարեդարձը Հանդիպեցան միմեանց այսպիսի աշխարհաժողով բարեպաշտ ուխտաւորների ներկայութեանը, որոնք անշուշտ կժաւալեն Ս. Մեռոնի շնորհաբաշխութեան արգասիքը Համայն Հայոց մէջ, ամրապնդելով ազգի կապը Մայր Աթոռոյս հետ և ճշգրիտ տեղեկութիւններ տանելով ազգայնոց Աթոռոյս և մանաւանդ Հոգեւոր ձեմարանիս իսկական դրութեան մասին:

Այո՛, արդէն 16 տարի է անցել այն օրից, երբ երջանկայիշատակ Տ. Գեորգ Գ. Հայրապետը կատարեց այս Հոգեւոր Բարձրագոյն Հաստատութեան բացման Հանդէսը: Դեռ թարմ կլինի շատերի յիշողութեան մէջ այն բնդհանուր ոգեւորութիւնն, որով ողջունեց Հայոց ազգը ձեմարանիս բացումը. ամեն կողմից տեղացին այն օրը անթիւ և անհամար շնորհաւորութեան ուղերձներ և անկեղծ ցընծութեան զգացմունքներ արտայայտուեցան ի նշան երախտագիտութեան առ Վահագնաւ Հիմնադիրը, խրախուսելով և քաջալերելով Սրբապնագոյն Հայրապետին այս մեծ և նշանաւոր գործը արիւթեամբ առաջ տանելու:

Շատ միսթարական էր այն երևոյթը, որ մեր ազգը այդպիսի մեծ բերկրութեամբ տօնեց իւր առաջին բարձրագոյն դպրոցական Հաստատութեան բացման տօնը, որ միանգամայն մի ազգային տօն եղաւ ամենի համար: Միսթարական էր այս երևոյթը, որովհետեւ

սորանով մեր ազգը ցոյց տուեց, որ նա լաւ է ըմբռնել այն բարձր գաղափարը, թէ եկեղեցական դասն բարձրացնելով միայն կարելի կլինի ազգի յառաջադիմութեանը ծառայել: Ճեմարանի նպատակն էլ այդ էր՝ այստեղից պէտք է իբրեւ կենդրոնից ճառագայթներով տարածուէր գիտութեան լոյսը բոլոր Հայոց մէջ և այս բովից պէտք է ելնէին մեր լուսավիտ եկեղեցականները:

Մեր ազգը դեռ առաջին դարու սկզբներում ճանաչել էր ի ձեռն Սրբազանից Առաքելոց Թադէոսի և Բարդուղիմէոսի քրիստոնէական ճշմարտութիւնը և լոյսը. ուստի և ամենայն դիւրութեամբ չորրորդ դարու առաջին տարիներում Ս. Հօրն մերոյ Գրիգորի Լուսաւորչի քարոզութեամբ ազգովին ընդունեց քրիստոնէութիւնը և այն օրուանից մինչև ցայժմ, յընթացս տասն և վեց դարերի, անսասան պահեց իւր Ս. եկեղեցին, որ թէ՛ յաջող և թէ՛ մանաւանդ անյաջող Հանգամանքներում իբրեւ մի խնամարկու մայր իւր թեւերի տակ պատսպարել է իւր որդւոց: Այսպիսով մի սերտ անջակտելի կապ է կազմուել ազգի և եկեղեցւոյ մէջ. մի անխզելի կապ, որ կայ և կմնայ, քանի որ կայ Հայոց ազգը. Հայը իւր ազգային եկեղեցուց դուրս Հայ չի կարողացել մնալ, չի էլ կարողանայ մնալ: Ահա մի սկզբունք, որից ոչ մի Հայ չպէտք է շեղուի, եթէ նա ճշմարիտ Հայ է: Սխալ չէ այն ընդհանրացած կարծիքը, թէ մենք մի կրօնական ազգ ենք. մենք ինքեանքս այլապէս չենք էլ ճանաչում մեզ՝ Հայ ասելով մենք Հասկանում ենք մի այնպիսի ազգ, որ Հայաստանեայց Առաքելական Ս. եկեղեցւոյ զաւակներից է բաղկացած: Այս ընդհանրացած նոյն իսկ ազգի սեփական կարծեաց Համաձայն է, որ օտարադաւան Հայը ինքը իւրեան Հայ չի ճանաչում, որքան էլ որ Համոզուած լինի, թէ Հայ ծագումն ունի:

Ուրեմն կմնայ, որ մենք Հայերս՝ լաւ ըմբռնելով այս ճշմարտութիւնը մեր ազգի վերաբերութեամբ, մեր ջանքը և աշխատանքը ի գործ դնենք եկեղեցական դասին բարձր գիւրգ տալու Համառ. պատրաստենք բարձր կրօնական և այլ և այլ կարեւոր արտաքին գիտութիւններով զարգացած եկեղեցականներ, որպէս զի նոքա իւրեանց յանձնուած հօտը արժանավայել կերպով հովուեն և առաջնորդեն նորան:

Իսկ և իսկ այս նպատակի համար Հոգելոյս Տ. Գէորգ Դ. Հայրապետը հիմնեց այս ճեմարանը: Նոյն նպատակով ոգևորուած ձեռք ձեռքի տուած օժանդակ է եղել և է ճեմարանի բարգաւաճմանը Մայր Աթոռոյս ամբողջ միաբան սկան ուխտը: Եւ ահա հինգ տարի է, որ ձեմարանը բազմ ունի վայելելու ներկայումս Հայաստանեայց Ս. Եկեղեցին խաղաղութեամբ կառավարող Նորին Սծութեան Վեհափառ Տ. Մակար Ա. Հայրապետական բարձր խնամքը: Նորին Սրբութիւնը Հայրապետական Գահը բազմելու օրից իւր բազմազբաղ Հոգսերի մէջ մեծ Հոգացողութեան առարկայ է բարեհաճել դարձրնելու ձեմարանիս յառաջադիմութեան խնդիրը:

Նորին Վեհափառութեան քաջալերական յորդորանացն ենք պարտական որ անցեալ տարի, ինչպէս յայտնի է ամենին, երեք Հոգի առաջին անգամ կուսակրօնութեան ուխտ տուին և սարկաւազ ձեռնադրուեցան: Նոյն յորդորը, նոյն խնամքը այս տարի էլ իւր պտուղը ունեցաւ՝ այսօր կարող եմ աւետել ի մխիթարութիւն մեզ ամենիս, որ յունիսի 9 ին, Ս. Ներսեսի Մեծի տօնի օրը բարձր հրամանաւ Նորին Սրբութեան նոր չորս սարկաւազունք աւելացան Մայր Աթոռոյս միաբանից մէջ ձեմարանի ուսանողներէց: Սորա են՝

Դ. Լսարանի ուսանող՝

Ստեփան սարկաւազ Եղիազարեան և

Ա. Լսարանի ուսանողներ՝

Սողոմոն սարկաւազ Սողոմոնեան

Ղ. Լեոնդ սարկաւազ Գեանջեցեան

Յուսիկ սարկաւազ Զոհրաբեան:

Այս, մեծ է Վեհափառ Հայրապետի խնամքը ձեմարանիս վերայ և միանգամայն անկեղծ է միաբանական ուխտի ուրախութիւնը, որ ձեմարանս սկսել է տալ փոքր առ փոքր իւր պտուղները:

Մենք չենք կարող երախտագիտական զգացմունքով չյիշել այն ուրախութեան արտասուքները, որով առաջին անգամ ընդունուեցաւ անդրանիկ սարկաւազաց ձեռնադրութեան ուխտը, նոյնը շաբաթունակվում է և կշարունակուի անշուշտ և առյապա:

Ձեռնայելով որ Աթոռոյս միաբանութիւնը ամեն զրկանք և նեղութիւն յանձն է առել ձեմարանի գոյութիւնը ապահովելու համար:

բայց և այնպէս այս դեռ բաւական չէ: Ճեմարանը միայն այն ժամանակ Հաստատ դիրք կստանայ, երբ ազգը ճեմարանի գոյութեան խնդիրը իւր կենսական խնդիրներէից մինը դարձնէ:

Մենք չենք ցանկանում այսօրուայ մեր և ձեր ամենի ուրախ տրամադրութիւնը փոխելու՝ գանգատներ յարուցանելով Հայ Հասարակութիւնից նորա սառնութեան Համար դէպի այսպիսի մի մեծ Հաստատութիւն, բայց և այնպէս աւելորդ չէ յիշեցնել, որ մեծ գործ պահանջողը ունի նաև—պարտիք իւր կողմից թեթեւացնելու պահանջի իրագործումը:

Թող ազգը չխնայէ իւր օժանդակութիւնը և ձեռք ձեռքի տուած ընթանայ այս գործում Աթոռոյս միաբանութեան հետ և մենք պահով ենք որ մեր գործը յաջողութիւն կունենայ:

Մենք քաղցը պարտաւորութիւն ենք Համարում յայտնելու ի լուր ունկնդիր Հանդիսականացդ մի շատ ուրախալի Հանգամանք. Թիֆլիզի Տափի թաղի Քամոյեանց Ս. Գէորգ եկեղեցւոյ պատուարժան երեցփոխան Պ. Գէորգ Աքիմեանը՝ կամենալով նպաստել ճեմարանի Համար ուսուցիչներ պատրաստելու գործին իւր օժանդակութեամբ, յօժարակամ յանձն առաւ եկեղեցական արդիւնքներից տարեկան 1680 ռ. յատկացնելու իբրև թոշակ արտասահմանում երկու որդեգիր պահելու Համար, որ բարձրագոյն գիտութիւն ստանան: Նորին Վեհափառութիւնը բարեհաճեցաւ ընդունելու այդ նպաստը, օրհնելով Պ. Աքիմեանին և ժողովուրդը իւր Հայրապետական օրհնութեամբ և Հրամայեց նոր ձեռնադրուած շնորհունակ Կարապետ և Գէորգ Սարկաւազներին արտասահման ուղարկել, ուր և նոքա շարունակում են իւրեանց ուսումը, Համաձայն պատուէրի Նորին Սրբութեան, ըստ Հրահանգութեան ուսումնական խորհրդոյ ճեմարանիս:

Մենք լիայոյս ենք, որ ի Հարկաւոր դէպս այսպիսի միջոցներ դեռ շատ կգտնուին ճեմարանական գործին օժանդակելու Համար, առանց ծանրանալու Աթոռոյս գանձարանի վերայ:

Հայ Հասարակութեան նիւթական օժանդակութիւնը ճեմարանին շատ տեսակ եղանակներով կարող է լինել՝ միանուագ դրամական նուիրատուութիւններով, մատենադարանին գրքեր և թանգա-

րանին զանազան գործիքներ և քարտեզներ նուիրելով, նոյնպէս որդեգիրներէ համար թոշակ տալով: Միանուագ նուիրատուութիւններ, թէև սակաւ, բայց լինում են երբեմն, մատենադարանին և թանգարանին ևս աւելի յաճախ, իսկ թոշակներ տուողներ շատ և շատ քիչ են. օրինակ՝ անցեալ տարի 117 աշակերտներէից միայն 2 հոգի թոշակատու էին, այն էլ իւրեանց ծնողաց և ոչ բարերարաց հաշուով: Բացառութիւն կազմում է մեծ. Պ. Մանուկ Բէյն, որ իւր ծախքով սան է պահում:

Աւելի մեծ պէտք է լինի հայ հասարակութեան աջակցութիւնը ճեմարանական գործին՝ մեր եկեղեցական-ծխական դպրոցների բարեկարգելու խնդրում, որ այսօր ամենակարեւոր խնդիրներից միին է մեզ համար: Մեր աշակերտները իւրեանց սկզբնական կրթութիւնը ստանում են ծխական դպրոցներում, ուստի և որքան այդ կրթութիւնը հիմնաւոր լինի, այնքան նորա շարունակութիւնը թեմական դպրոցներում և ճեմարանումս աւելի արդիւնաւոր կլինի: Մեր թեմական դպրոցները ստորին դասարաններ ունին, իսկ ճեմարանը չունի. բայց մեր ստորին Պ. դասարանը մտնելու համար պահանջվում է երկդասեան դպրոցի դասընթացքը. այն ինչ ամեն տարի մեր զանգատը այս ամբիօնից այն է եղել և այսօր էլ այն է, որ մեր երկդասեան դպրոցների համար նշանակուած ծրագիրը ճշտութեամբ չեն անցնում դպրոցներում, ուստի և քննութեան ներկայացող մանուկները շատ անպատրաստ են լինում Պ. դասարան ընդունուելու: Մեծ պարտք կայ հայ հասարակութեանց վերայ հսկելու, որ մեր եկեղեցական դպրոցները հետզհետէ բարեկարգուին, որպէս զի թեմական դպրոցները և մեր ճեմարանը լաւ պատրաստուած աշակերտներ ընդունեն և ի դուր տեղը չպարտաւորուին ստորին դասարաններ պահելու իւրեանց բարձր դասարանների համար աշակերտներ հասցնելու նպատակով: Մենք չունինք ստորին դասարաններ և այս իսկ պատճառով մեր Պ. դասարանը կազմում են այլ և այլ դպրոցներից եկած նոր ընդունուած տղայք, որոնց ընդունելութեան ծամանակ ստիպուած ենք լինում ամեն տեսակ զիջողութիւններ անելու, սոքա շատ մեծ աշխատանք պէտք է յետոյ գործ դնեն, որ կարողանան թէ իւրեանց գիտութեան թերութիւն-

ները լրացնել և թէ Գ. դասարանի ընթացքը անցնել: Ահա թէ ինչու մեր լսարաններում շատ փոքրաթիւ են ուսանողները, չնայելով որ ստորին դասարաններում բաւականաչափ աշակերտ ենք ունենում:

Ճեմարանս ըստ առաջնոյն բաղկացած էր չորս դպրոցական դասարաններից և երեք մասնագիտական լսարաններից, որոնց մէջ աշակերտեալները զետեղուած էին հետևեալ թուով.

Գ. դասարանում	27	Հոգի	Ա. լսարանում	12	»
Դ. »	17	»	Բ. »	12	»
Ե. »	23	»	Գ. »	8	»
Զ. »	18	»	Ընդամենը		117

Տոյակ աշակերտելոյ ըստ տեղագրութեան

Ի. ՌՈՒՍԱՍՏԱՆ.

Ա. ԲԵՍՍԱՐԱԲԱՅԻ ԱԻՃԱԿ.

Նոր Նախիջևան	4
Թոփթի գիւղ	1
Մեծ Սալա	2
Զլդըր	1
Թէոդոսիա	1
Օդեսա	1
10	

Բ. ԱԺԴԱՐԻԱՆԻ ԱԻՃԱԿ.

Մոզդուկ	1
Ղալար	1
Եկատերինոդար	1

Վլադիկաւկազ	1
Ս. Խաչ	1
Նոր Արմաւիր գիւղ	1
6	

Գ. ՎՐԱՍՏԱՆԻ ԵՒ ԻՄԵՐԵՅԻ ԱԻՃԱԿ

Տփլիս	1
Գեառգեառ գիւղ	1
Արդուի	1
Դիլիջան	1
Կոդբ	1
Ռուշէթ	1

Ախալցխա	7
Ախալքալաք	1
Փանձակ	1
Բանանց գիւղ	1
	16

Դ. ԸՐՑԸԻՈՒ ՎԻՃԸԿ.

Շուշի	3
Նորշէն գիւղ	1
Մարաղա	2
Վարդաշէն	3
Հաւարիկ	1
	10

Ե. ԵՐԵՒԱՆԻ ՎԻՃԸԿ.

Երևան	2
Փարաքար գիւղ	1
Ղամարլու	1
Էրտափին	1
Քալար	1
Ալեքսանդրապոլ	12
Մահմադաշու գիւղ	2
Հին Նախիջևան	1
Նորս գիւղ	1
Ագուլիս	3
Մեղրի	3
Յդնա	2
Բռնակոթ	2
Գորիս	1
Խլաթաղ	1
Վաղարշապատ	7
Օշական	1
Աշտարակ	1

Մարգարա	1
Իգդիր	1
Նորաշէն	1
Ղազանֆար	1
Կարս	6

53

II. ՏԱՃԿԱՍՏԱՆ.

Ա. ՏԱՃԿԱՆՆԵՐ.

Վան	1
Երզնկա	2
Սղերդ	1
Աւրան գիւղ	1
Լէս	1
	6

Բ. ԸՆԸՏՈՒԸ.

Աֆիոն-Գարաշիսար	1
Քեօթայ	1
Ամասիա	1
Սեբաստիա	1

Գ. ԿԻԼԻԿԻԱ.

Ատանա	1
Անթափ	1
Խըյան գիւղ	1
Հաճին	1

Դ. ԵՐԸՊԱԿԱՆ ՏԱՃԿԱՍՏԱՆ.

Կ. Պօլիս	3
----------	---

III. ՊԱՐՍԿԱՍՏԱՆ.

Դաւրէժ	4
	4

IV. ՌՈՒՄԱՆԻԱ.

Ֆոքշան	1
	1
Ընդամենը	117

Առաջին տարուայ ուսուցիչներից շնորհունակ Կարապետ Սարկաւազը արտասահման գնալու պատճառով թողեց իւր ուսուցչութեան և վերակացութեան պաշտօնը: Սորա փոխարէն Հրաւիրուեցաւ ճեմարանիս ընթացաւարտ պ. Անտոն Տ. Գրիգորեանը:

Ֆրանսերէնի ազատ մնացած դասերի համար Հրաւիրուեցաւ պ. Աստուածատուր Պիտանեանը:

Միւս ուսուցիչներից և վերակացուներից թողին ճեմարանը՝ պ. պ. Եղիշէ Մադաթեան, Բարսեղ Գասպարեան և Սէթ Յարութիւնեան:

Նոր Հրաւիրուեցան սոցա փոխարէն՝ պ. պ. Ստեփան Լիսիցեան և Լեոն Խոջայեան. իսկ վերակացութեան պաշտօնը յաճնուեցաւ շնորհունակ Գարեգին սարկաւազին:

Ճեմարանիս մասնագիտական բաժնի դասացուցակի մէջ աւելացաւ մի նոր աւարկայ՝ Քրիստոնէական արուեստի պատմութիւնը, որ անցեալ տարի աւանդում էր պ. Վարդգէս Սուրէնեանը շաբաթական երկու միացեալ դասով երեք լսարանների ուսանողաց:

Պարոն Սուրէնեանը յանձն առաւ նաև նկարչութեան դասեր դասարաններում, շաբաթական վեց ժամ:

Ահա ցուցակ դասերի մատակարարութեան.

1. Տ. ՍԱՀԱԿ ՎԱՐԴԱՊԵՏ

Քրիստոնէական Վարդապետութիւն

Ինչ Հայաստանեայ Ս. Եկեղեցւոյ

Ե. դասարան 3 դաս

3 >

2. Տ. ՂԵԻՈՆԻ ՎԱՐԴԱՊԵՏ

Ձայնաճիւղ-Ղիւն

Գ. դասարան	3	դաս
Դ. »	3	»
	6	»

3. Պ. ՍԵԴՐԱԿ ՄԱՆԴԻՆԵԱՆ

Ս. Տրամբան-Ղիւն

Ձ. դասարան	4	դաս
------------	---	-----

Բ. Մանկավարժան-Ղիւն

Ա. Լսարան	4	»
-----------	---	---

Գ. Հաճիճան-Ղիւն

Բ. Լսարան	4	դաս
-----------	---	-----

Դ. Ուսումնական-Ղիւն

Դ. Լսարան	2	»
-----------	---	---

Ե. Բարձրագույն Գիտություն-Ղիւն

Դ. Լսարան	2	»
	16	»

Ա. Ղեկավարութիւն վարժոցի:

4. Պ. ԿԱՐԱՊԵՏ ԿՈՍՏԱՆԵԱՆ

Ս. Եկեղեց. Մարմնագիր. Հայոց

Բ. Լսարան	2	դաս
Դ. »	2	»

Բ. Եկեղ. Պարտ. Հայոց

Ձ. դասարան	2	»
------------	---	---

Գ. Պարտ. Մարմնագիր. Հայոց

Ե. դասարան	3	»
------------	---	---

Ձ. »	3	»
------	---	---

Ա. Լսարան	2	»
-----------	---	---

Միացեալ Լսարանք.	2	»
------------------	---	---

16 »

5. Պ. ՄԿՐՏԻՉ ՊԱԼԵԱՆ

Հայոց Էկեղ.

Դ. դասարան	5	դաս
------------	---	-----

Դ. »	5	»
------	---	---

Ե. »	2	»
------	---	---

Ձ. »	2	»
------	---	---

14 »

6. Պ. ՍԱՐԳ. Տ. ԳԱՐԻԷԼԵԱՆ

Ս. Ուսումն. Ս. Գրք.

Դ. դասարան	3	դաս
------------	---	-----

Դ. »	3	»
------	---	---

Ե. »	2	»
------	---	---

Ձ. »	2	»
------	---	---

Բ. Քննական-Ղիւն Ս. Գրք.

Ա. Լսարան	3	»
-----------	---	---

Բ. »	3	»
------	---	---

Գ. Եկեղեցական Պարտ.

Ա. Լսարան	2	»
-----------	---	---

Բ. Լսարան	2	»
Գ. »	2	»
	22	»

7. Պ. ՅՈՎՃ. ՅՈՎՃԱՆՆԻՍԵԱՆ

... Ռոսսիայ լեզու

Գ. Դասարան	4	Դաս
Դ. »	4	»
Ե. »	4	»
Զ. »	4	»

Բ. Պարս. Ընդհ. Մարենագիր.

Ա. Լսարան	2	»
Բ. »	2	»
Գ. »	2	»
	22	»

8. Պ. ՍՏԵՓԱՆ ԼԻՍԻՑԵԱՆ

... Ընդհ. Պարս.-լի-ն

Գ. Դասարան	2	Դաս
Դ. »	2	»
Ե. »	2	»
Զ. »	2	»

Բ. Ռոսսիայ Պարս.-լի-ն

Ե. Դասարան	2	Դաս
Զ. »	2	»

Գ. Ռոսսիայ. աշխարհագրա-
լի-ն

Դ. Դասարան	2	»
------------	---	---

Դ. Պարս. Մարենագիր. Ռոսսիայ

Ա. Լսարան	2	»
Բ. »	2	»
Գ. »	2	»
	20	»

9. ԱՍՏՈՒԱԾԱՏ. ՊԻՏԱՆԵԱՆ

Ֆրանսերեն լեզու

Դ. Դասարան	3	Դաս
Ե. »	3	»
Զ. »	3	»
Ա. Լսարան	3	»
Բ. »	3	»
Գ. »	2	»
	17	»

10. Պ. ԼԵԻՈՆ ԽՕԶԱՅԵԱՆ

... Մաթեմատիկայ

Դ. Դասարան	4	Դաս
Դ. »	4	»
Ե. »	3	»
Զ. »	2	»

Բ. Բնագիտություն

Ե. Դասարան	2	»
Զ. »	2	»

Գ. Տիեզերագրություն

Ե. Դասարան	1	»
Զ. »	1	»
	19	»

	Հ. ԴճԵՎԴՍ	Հ. ԴԿՈԽՈՆ	Դ. ԴԿՈՍԻՆ	Հ. ԴԿՈՍԻՆ ԴՆԵՐՈՆԻՆԻ
Տ. Սահակ Վարդապետ	80	24	»	56
« Ղևոնդ Վարդապետ	156	»	4	160
Պ. Ս. Մանդինեան	386	23	»	363
» Կ. Կոստանեան	412	64	»	348
» Մ. Պալեան	368	10	»	
» Ս. Տ. Գաբրիէլեան	531	»	3	534
» Յ. Յովհաննիսեան	522	9	»	513
» Լիսիցեան	488	19	»	469
» Ա. Պիտանեան	286	3	»	283
» Լ. Խօջայեան	484	40	»	444
» Ա. Տ. Գրիգորեան	136	1	»	135
» Գ. Տ. Բարդուղիմէոսեան	103	»	1	104
» Վ. Սուրէնեան	48	7	»	41
» Ռ. Ռուբինեան	152	10	»	142
Նահապետ արեղայ	52	»	2	54
Գումար	4204	210	10	4004

Ուրեմն ընդ ամենը պարապ են մնացել 200 դաս, որ 100ին մօտ 5 տոկոս է կազմում:

Անցեալ տարի ըստ սովորականին Հանդիսաւոր կերպով տօնեցինք՝ Ս. Թարգմանչաց, Առաջին Լուսաւորչաց մերոց Ս. Առաքելոց Թաղէոսի և Բարդուղիմէոսի, Ս. Վարդանանց զօրավարաց և Ս. Հօրն մերոյ Գրիգորի Լուսաւորչի եկեղեցական տօները:

Նոյնպէս Հանդիսով տօնուեցաւ Ճեմարանիս տարեդարձը:

Նաև ունեցանք 9 գրականական երեկոյթներ և 2 ճառախօսութիւն Վեհաբանում Նորին Սրբութեան Վեհափառ Հայրապետի առաջ:

Այս բոլոր Հանդէսներին մասնակցել են՝ գրաւոր և բանաւոր աշխատութիւններով ձեմարանիս ուսանողները և աշակերտները:

Մայիսին եղան ըստ սովորականին հրապարակական քննութիւններ:

Գ. Լսարանի բարոյական փիլիսոփայութեան և Բ. լսարանի Ս. Գրոց Գննաբանութեան քննութիւնները բարեհաճեցաւ պատուելիւ բարձր ներկայութեամբ Նորին Վեհափառութիւնը:

Միաբանութեան անդամներն ևս յաճախակի ներկայ էին լինում քննութիւններին:

Ահա և փոխադրութեանց ցուցակը.

	Եւարտե- ցին	Փոխադ- րեցին	Մնացին	Երձակուե- ցան ըստ կամաց	Գումար
Գ. Լսարան	8	»	»	»	8
Բ. »	»	12	»	»	12
Ա. »	»	12	»	»	12
Զ. դասարան	8	10	»	»	18
Ե. »	»	15	7	1	23
Դ. »	»	11	4	2	17
Գ. »	»	14	8	5	27
Գումար	16	74	19	8	117

Նորին Ս. Օծութեան Հայրապետական օրհնութեամբ այս տարի աւարտեցին իւրեանց ուսման ընթացքը Գ. լսարանից ութ հոգի.

1. Բալայեան Արսէն Գեառգեառեցի
2. Համբարձումեան Համբարձում Վաղարշապատցի
3. Հովուեան Սիմէօն Արդուեցի

4. Մխիթարեան Սիմէօն Ալէքսանդրապօլցի
5. Յովսէփեան Գարեգին սարկաւազ Մարաղեցի
6. Տէր Մկրտչեան Ստեփանոս Ագուլեցի
7. Տէր Յովհաննիսեան Տիգրան Նորշէնցի
8. Բուշմանեան Պատուական Վարդաշէնցի:

Ճեմարանիս ուսումնական խորհուրդը ունեցել է «16» նիստ աշակերտելոց յառաջադիմութեան և զարգացման վերաբերեալ խնդիրների համար:

Ճեմարանում կարգապահութեան վերայ հսկողութիւնը յանձնուած էր Պ. Պ. Գրիգոր Տ. Յարութիւնեանին, Գէորգ Տ. Բարդուղիմէոսեանին, Անտոն Տէր Գրիգորեանին և շնորհունակ Գարեգին Սարկաւազին:

Ճեմարանիս տնտեսի պաշտօնը ըստ առաջնոյն վարել է մինչև մայիս ամիսը շնորհունակ Կիւրեղ Սարկաւազը (այժմ բարեշնորհ Կիւրեղ աբեղայ), իսկ յունիսից այդ գործն ևս յանձնուեցաւ շնորհունակ Գարեգին Սարկաւազին:

Մայր եկեղեցւոյս դպրութիւնը ըստ սովորականին կատարում էին մեր աշակերտեալները, նախապէս Հոգեշնորհ Տ. Ղևոնդ Վարդապետի առաջնորդութեամբ աւուր պատշաճի ժամերգութիւնը կրկնելով դասերից յետոյ:

Ճեմարանիս առողջապահական վիճակը, գոհութիւն Աստուծոյ, լաւ էր. չնայելով որ շատ հիւանդներ ունեցանք անցեալ տարի, բայց Ճեմարանիս բժիշկ Պ. Միքայէլ Զարգարեանի հոգացողութեամբ բոլորն անվտանգ մնացին:

Այս համառօտ տեղեկագրովս մենք կամեցանք փոքր ի շատ: ծանօթացնել մեր գործունէութեանը ձեմարանիս մէջ:

ձեմարանի ուսուցչական խմբի համար մեծ բաղդաւորութիւն և պատիւ է, որ արժանացել ենք վայելելու Նորին Սրբութեան Վեհափառ Հայրապետի բարձր ուշադրութիւնը և վստահութիւնը, որոնց փոխարէն ամեն մի՛ն մեզանից իւրովսանն աշխատել է արդիւնաւորելու աշակերտելոց համար այն ուսմունքները, որ մեր հմտութեանցն են յանձնուած:

Աշակերտեալներն ևս երախտագէտ սրտով վայելելով Աթոռոյս խնամքն և հոգացողութիւնը, ամենիս ակնկալութիւններին մասամբ գոհացումն են տուել՝ իւրեանց միջից չորս սարկաւազ առաջարկելով ի մեծ ուրախութիւն մեզ ամենիս և ի քաջալերութիւն յետագայից:

Ամենակարողն Աստուած զարգացնէ և լուսաւորէ մեր աշակերտելոց միտքը և Ամենաբաւական Հոգւոյն Սրբոյ շնորհքը տայ նոցա հետզհետէ լրումն տալու եկեղեցւոյ պահանջներին, ընդունելով կրօնաւորութեան քաղցր լուծը:

Ամենաբարին Աստուած երկարացնէ Սրբազնակատար Հայրապետի Տ. Մակարայ Ա. Թանկագին կենաց օրերը և համայն ազգի և միաբանութեան սրտազին բաղձանաց համեմատ կարողութիւն պարգևէ Նորին Ս. Օծութեան հզօր ձեռքով ղեկավարելու ողորմութեամբն Աստուծոյ իւրեան յանձնած հօտը արդի բազմապահանջ բարոյական և կրթական կարօտութեանց մէջ, որ աւուր բարեկարգուող եկեղեցական դպրոցների միջոցով, որոնց գլուխ է անցած այսօր Մօրս Լուսոյ Ս. Էջմիածնի Հոգևոր ձեմարանս:

Հայր Տեսչի հաշուետուութիւնից յետ, Հայոց լեզուի ուսուցիչ Մեծ. Պ. Ն. Քարամանցը բարձրանալով ամբիոն, խօսեց հետեւեալը:

ՍՐԲԱԶԱՆ ՏՅԵՐԲԻ,

ՍՐԲԱԿՐՕՆ ՀԱՐԲ ԵՒ ՍԻՐԵԼԻ ԱՇԱԿԵՐՏԻ-

«Եթէ մոռացայց զքեզ, Երուսողէմ,
 «մոռացի զիս աջ իմ եւ կցեսցի չեզու-
 «իմ ի քիմս իմ.....»

Հայրենի աւերակների վրայ ողբացող մարգարէի սոսկալի եր-
 դումն եմ յիշեցնում ձեզ այս տարեւորական տօնիս օրը, այն մար-
 գարէի, որ իւր Հայրենիքն աւերակ դառնալուց փրկել չը կարո-
 ղանալով՝ հաւատարիմ մնաց նորա սրբավայրերի բեկորներին և
 սարսափելի երդմամբ ուխտ դրաւ չմոռնալ այդ աւերակները:
 Հայրենիքն ու նրա սրբավայրերը սիրելի են միշտ, լինեն նրանք ճո-
 խացած թէ աւերակ, սիրելի են իւրեանց հովթեամբ: Ով ըմբռնել է
 որ և է սրբավայրի հովթիւնը, նրա սէրը զէպի այդ նուիրական
 վայրը յաւիտենական է:

Մարդուս ի բնէ յատուկ է սիրել իւր Հայրենի հողն և մանաւանդ
 այն որորանն, ուր նա աճել և զարգացել է, այդ սէրն անխզելի է
 և մշտաբորբոք կրակի նման միշտ վառ է, սակայն աւօրեայ
 կեանքն իւր հոգեւորվ և ցաւերով իբրեւ մոխրի տակ թաղում է
 այդ կրակը, այս օրինակ տարեւորական Հանդէսների նպատակն է
 ահա հեռացնել մոխիրն և բորբոքել այդ մշտավառ Հայրենասիրա-
 կան հուրը:

Տարեւորական տօներն են ահա այն յուշարար ժամերն, որ մեր
 արագընթաց կեանքի թաւալող հոսանքի ժամանակ ստիպում են
 մեզ անդրադառնալ, յիշեցնում են անցեալն և առիթ են տալիս
 ապագայի մասին խորհելու:

Այսօր, ձեմարանիս բացման վեշտասաներորդ տարեդարձի օրն,

ինձ է վիճակուած յուշարար լինել այն նշանակութեան, որ այս հոյակապ հիմնարկութիւնն ունի մեզ համար, արտայայտող լինել այն յոյսերի, որ իւրաքանչիւր հայ սպասում է նրանից և այս մատաղերամ սրտերում այն կրակն արծարծել և վառ պահել, որ յատուկ է երախտապարտ սրտերին:

Փրկութեան դռների բացման օրուանից աւետեաց ձայնը հնչեց հայու ականջին, տասն և ինն դար է արդէն, որ յաւիտենական ճշմարտութիւնը քարոզուում է մեզ, իսկ մեր նախահայրերի հաւատոյ անդրդուելի կոթողը վեշտասան դարերու գլխից ահաւասիկ մեզ է նայում:

Հայ ազգը տեղիք չունի Խրայելի Սիօնի նախանձելու, վասն զի Փրկիչը նրան նոր Սիօնի ժառանգորդ դարձրեց: Այսօր Ասիոյ բազմաթիւ ազգերի մէջ բարձրագլուխ պարծենում է հայ ազգն իւր դար աւոր սրբավայրերով և քաղաքակիրթ աշխարհին ցոյց է տալիս պարծանքով այս վեշտասան դարու լուսոյ կոթողը: Մարդկային պատմութեան էջերն իւրեանց քաջագործութիւններով լեցնող գոռազգերի յիշատակն է միայն մնացել, մինչդեռ «փոքր ածու» կազմող հայ ազգն այսօր մարդկային սերնդի մէջ իբրեւ մի հին ազնուական տոհմ ապրում է քրիստոնէական լուսոյ շնորհիւ և անսպառելի կենսական ոյժ է ցոյց տալիս: Ազգերի մասնակցութիւնը մարդկային յառաջդիմութեան ասպարիզում նրանց զօրութիւնով չէ չափուում, այլ նրանց յաւիտենական յառաջդիմութեան մէջ ունեցած մասնակցութիւնով: Այսօրուան քաղաքակիրթութիւնն ու լուսաւորութիւնը ամենայն իրաւամբ քրիստոնէական պէտք է կոչենք, որովհետեւ միայն քրիստոնէայ ազգերն են ստեղծել այդ և այժմ միայն նրանք են մասնակցում դարուս յառաջդիմութեան: Անհերքելի է ուրեմն, որ մեր ազգն ևս մասնակից է այդ յառաջդիմութեան գործին և դարուս լուսաւորութեան հաղորդ լինելու ընդունակ, որովհետեւ նա է եղել այն ազգն, որ Ասիոյ բազմաթիւ ազգերի մէջ միայն վառ է պահել քրիստոնէական լուսոյ ջահը, չնայելով այն սաստկաշունչ հողմերին, որ աշխարհիս չորս ծագերից ևս սպառնացել են հանգցնել այդ: Մեր սուրբ եկեղեցին իւր հաստատութեան օրուանից մինչև ցայսօր անդադար յարձակմանց է ենթարկուել,

սակայն ոչ արևելեան իշխանի հալածանքը, ոչ անապատի որդոց մարգարէի աւերիչ սուրը, ոչ վայրենի նետողների բազմամբոխ հեղեղը և ոչ արևմտեան խարդաւանանքները կարողացել են շարժել նրա հիմքը, որովհետև սրբոյն Գրիգորի անդուլ աղօթքն է բարեխօս նրա համար: Հայը զոհել է ամենայն ինչ, նորա դարաւոր փառքերի աւերակներն վկայ են մեղ այսօր, սակայն նա ազատել է իւր եկեղեցին, այդ եկեղեցու իւրաքանչիւր քարն մեր պանծալի նախահայրերի արիւնով է շաղախուած և նա ինքն է կենդանի վկայ մեր հայրերի մտքի և հոգու վեհութեան: Ահա այն մեծ ժառանգութիւնն, որ թողել են մեր նախահայրերն, այդ ժառանգութեան պաշապանն է եղել միշտ Մայր Աթոռը, սա է մեր դիակնացած հայրենեաց սիրտը, որ միշտ բաբախում է:

Եկեղեցին փրկութեան լուսոյ հետ բերաւ մեզ և մտաւոր լոյս, հայկական դպրութեան ծնունդն ու բարգաւաճումն եկեղեցու միջոցով եղաւ: Յայսօր իսկ մեր նախահայրք լեզուն այդ վսեմ կամարների տակ են պահպանուած, նրա պարսպների հովանաւորութեան տակ են գործել և գրել մեր անզուգական եկեղեցական հայերը: Խաւար դարերի ընթացքում գիտութիւնների ապաստանաւանը մեր վանքերն են եղել, ուր մշակուել են օտարներից փոխ առած և հայրենի ուսմունքներն և պահպանուելով մեզ հասել: Բարեպատեհ է այսօր հանգամանքն, սրբալոյս Միւռոնի օրհնութեան հանդէսն առիթ է տալիս մեր սուրբ եկեղեցու ղօրութիւնը տեսնելու: Երկրիս ո՞ր ծայրերից արդեօք չը կան այսօր այստեղ հայեր, աշխարհիս չորս կողմերում ցրուած հայերն այսօր գերբնական ուժով մղուել են դէպի իւրեանց մօր գիրկն: Հայրենիքից հեռացած, հայրենի սովորութիւններից խորթացած, հայրենի տարազը թողած, մայրենի բարբառը մոռացած հայն՝ այսօր հայ է զգում իրեն և երկար ճանապարհների նեղութիւնն արհամարհելով, դիմում է դէպի իւր հայրենեաց սիրտն, դէպի Միածնի իջման տեղը:

Քանի դեռ սիրտը բաբախում է, մարդս չէ մեռած, քանի դեռ աւերակների տակ ծածկուած հայկական սիրտն այստեղ Միածնի իջման տեղում զարկում է, դեռ կենդանի է հայն:

Տեսէք ուրեմն, սիրելի աշակերտք, հայկական եկեղեցին է միայն

մեր դարերից ստացած ժառանգութիւնը՝ նա է օտարացած Հային Հայրենիքի հետ կապողը, նա է մեր լեզուն պահպանողը, նա է ամփոփում իւր մէջ Հայկական անցեալն, նրա համար պէտք է դուք այն երդումն անէք, ինչ երդում մարգարէն է անում: Իւրաքանչիւրը ձեզնից պէտք է կրկնէ. «եթէ մոռացայց զքեզ Եջմիածին, մոռացի զիս աջ իմ, կցեսցի լեզու իմ ի քիմս իմ»:

Նեղութեան, հալածանաց և աղքատութեան դարերում մեր նախահայրերը, Եջմիածնի սրբակրօն Հայրերը, երկիւղով պահպանել են այս ազգային մեծ աւանդն, պարծանք նրանց իւրեանց աւանդապահութեան համար: Բայց նրանց պարծանքը միայն աւանդապահութիւնը չէ եղել, նրանք և իւրեանց համար աւանդապահ յաջորդներ պատրաստել են ջանացել: Որչափ անարգ է այն ժառանգը, որ ոչ միայն Հայրենի ժառանգութիւնը չէ շահեցնում, այլ նաև վատնում է, նոյնչափ և առաւել յարգելի և մեծարելի է այն ժառանգը, որ իւր կեանքի գնով ազատում է Հայրենի աւանդն և իւր յաջորդներին է թողնում:

Ս. Եջմիածնի ժառանգաւորները դարեր շարունակ նեղութիւնների դիմանալով՝ ազատել են մեր միակ և նուիրական ժառանգութիւնը, մեր սուրբ եկեղեցին. ոչ այդչափ միայն, նրանք հոգացել են այդ ժառանգութեան ապագայ ապահովութեան համար, նրանք մտածել են իւրեանցից յետոյ այնպիսի ժառանգորդներ պատրաստել, որ ոչ միայն պահպանեն այդ անգին գանձն, այլ նաև շահեցնեն, ոչ միայն հոգան եկեղեցու պահպանութեան համար, այլ նաև պայծառացնեն այդ: Տասն և վեց տարի է ահա, որ ձեմարանիս երջանկայիշատակ Հիմնադիրն, Դէորդ Դ. բացել է այս տաճարի դուռները, տասն և վեց տարի է, որ Ս. Եջմիածնի սրբակրօն միաբանութիւնը զրկանքների տանելով՝ պահպանում է ձեմարանը, որպէս զի արժանաւոր ժառանգորդներ պատրաստէ Մայր Աթոռոյս համար:

Ձեզ եմ ասում, սիրելի աշակերտք, լաւ ըմբռնեցէք ձեր կոչումն, ջանացէք արժանաւոր ժառանգաւորներ լինել այն վեհ անձանց, որոնք իբրև աստղեր փայլում են մեր երկնքի վերայ: Հայ ազգի ամենաթանգագին և միակ ժառանգութիւնը դուք պէտք է

պահպանէք, եթէ ձեզնից ամէն մէկը չի կրկնիլ մարգարէի երդումն, եթէ ձեզնից իւրաքանչիւրը կեանքի գնով պատրաստ չի լինիլ պաշտպանելու այդ աւանդն, այն ժամանակ զուր են ազգի յոյսերն ձեզնից, զուր է ձեմարանիս խնամակալող ազգիս Վեհափառ Մակար Կաթողիկոսի և միաբանութեան ղոհողութիւններն և զուր էին ձեմարանիս հանգուցեալ Հիմնադրի ջանքերն: Սիրելի աշակերտք, դուք ժառանգ էք առաքինի հայրերի, հետևեցէք ուրեմն նոցա: Զեզ նշանաբան եմ տալիս վաղամեռիկ բանաստեղծի խօսքերն.

Հէզ մարդկութեան մէկ ոստը գոս

Հայրենիք մը ունիմ թշուառ,

Զօգնած անոր մեռնել աննշան,

Ո՛հ այս է սոսկ ցաւ ինձ համար:

Եթէ ձեզնից իւրաքանչիւրն ընդունակ կը լինի այդ ցաւն զգալու և այդ ցաւով մեռնելու, այն ժամանակ միայն ձեմարանը հասած կը լինի իւր նպատակին:

Սրբազան հարք, օրհնեցէք այս մաւաղերամ խումբը, որ Աստուած նրանց զօրացնի և ոյժ տայ իւրեանց կոչմանը ծառայելու, օրհնեցէք ձեմարանիս մշակներին, որ Բարձրելոյ շնորհն պտղաբեր առնէ մեր ջանքերը:

Մէջէ մէջ երգուեցան յարմարաւոր ազգային երգեր. և ապա տեղապահ Գեր. Երեմիա Սրբազան Եպիսկոպոսը յոտնկայս ասաց մի քանի խօսք, թէ ձեմարանը երկար տարիներ անպտուղ երևելից յետ վերջապէս սկսաւ տալ իւր պտուղներն եկեղեցւոյն և ազգիս և յոյս յայտնեց, որ ապագայում նա կտայ մեր արժանաւոր հարց արժանաւոր ժառանգներ ի պայծառութիւն սուրբ եկեղեցւոյ և ի միեթարութիւն ազգիս ու պահպանիչով վերջ տուեց հանդիսին, օրհնելով ամենքին:

30 ին կիրակի Ս. Մեռոնի օրհնութեան երեկոյեան գեղեցիկ հրաւառութիւն էր ձեմարանի առաջ. ձեմարանի ճակատը զարդարուած էր վնդիլներով և գոյնզգոյն լապտերներով: Ժամը 8 ին ձեմարանի հարաւային կողմում ցոյց տրուեցան նախ հանգուցեալ Գէորգ չորրորդի պատկերն և ապա պատկերներ Սրբազան պատմութիւնից մոդական լապտերով, որոնք

ղբաղեցրին ժողովրդեան, Ելեքտրական արեգակը շարունակ լուսաւորում էր ձեմարանի բոլոր շրջակայքն և երգեցիկ խումբը գրեթէ անընդհատաբար երգում էր, ժամը 10ին հազիւ ցրուեցաւ ժողովուրդը:

Անցեալ հոկտեմբերի 20ին Ս. Աթոռոյս միաբան շնորհազարդ Գրիգոր Վարդապետ Գառնակերեանցը Ս. Գայիանէի վանքում Գեր. Սուքիաս Եպիսկոպոսից ստացաւ Ծայրագոյն Վարդապետի աստիճանը:

Նոյն ամսի 21ին Նորին Օծութիւն Վեհափառ Տէր Մակար Հայրապետն ազգիս բարեհաճեցաւ սուրբ օծմամբ և ձեռնադրութեամբ յաստիճան Եպիսկոպոսութեան համբառնալ Գրիգոր Գառնակերեանց և Նսայի Աստուածատրեանց բարեշնորհ Ծայրագոյն վարդապետներին: Վերջինը ձեռնադրուեցաւ Սպահանի և Հնդկաստանի վիճակի վերայ:

Հոկտեմբերի 14ին Ս. Գայիանէի վանքում Սրբազան Արիստակէս Եպիսկոպոս Դաւթեանից ձեռնադրուեցան կուսակրօն քահանայ Ս. Աթոռոյս միաբանք շնորհունակ Ադամ Սարկաւազ Արզումանեանց Արցախեցի, և Նիկողայոս Սարկաւազ Շիւեանց Տփլիսեցի, վերջնոյս անունը փոխեցաւ Աշոտ: Նաև կուսակրօն Սարկաւազութեան աստիճան ընդունեց ուսումնաւարտ ձեմարանի՝ շնորհունակ Տիգրան Տէր Յովհաննիսեան, Արցախ գաւառի Նոր-շէն գիւղից: